ՍԻՄՈՆ ՎՐԱՑՅԱՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

ԱՐՇԱԿ ԲԱԼՅԱՆ

1918–1920 թթ. Հայաստանը հայտնվել էր ներքին և հատկապես արտաքին քաղաքական տագնապալի վիճակում, վտանգված էր ժողովրդի ֆիզիկական գոյությունը: Հյուսիսից սպառնում էր Խորհրդային Ռուսաստանը, հարավ-արևմուտքից՝ Հանրապետության տարածք ներխուժած ու Ալեքսանդրապոլը գրաված քեմալական Թուրքիան, իսկ արևելքից՝ Նախիջևանի թուրքերն ու մուսավաթական Ադրբեջանի ասկյարները: Հանգիստ չէին և երկրի ներսում բնակվող թուրքերը: Օրակարգում էր նաև վրացական վտանգը. Վրաստանը չեզոքության քողի տակ Հայաստանի հետ կնքած ժամանակավոր համաձայնագրով զորքերը մտցնելով Բորչալուի գավառ՝ ձգտում էր այն վրացական անվիճելի տարածք համարել[1]: Հ. Օհանջանյանի կառավարությունն իրեն սպառել էր արդեն: Իրագրությունը թելադրում էր նոր մոտեցումներ: Հասարակական-քաղաքական շրջաններում առկա էր երկու տեսակետ. «Ոմանք անհրաժեշտ էին գտնում բոլոր կուսակցությունների լայն համախմբումը մի այնպիսի մարդու նախագահությամբ, որը ընդունակ լիներ միացնել իր անձի շուրջ բոլոր քաղաքական հոսանքները և կարողանար վստահություն ներշնչել թուրքերին: Ուրիշները օգտակար էին համարում «ձախակողմյան» կառավարության կազմությունը, որպեսզի հնարավոր լինի ընդհանուր լեզու գտնել բոլշևիկների հետ»[2]: Հաշվի առնելով այս ամենը, ընտրությունը կանգ է առնում Հ. Քաջազնունու թեկնածության վրա: Ավելորդ չենք համարում նշել, որ Հանրապետության առաջին վարչապետ Հ. Քաջազնունին 1918 թ. օգոստոսի 3-ին Խորհրդարանում ներկայացրած կառավարական հայտարարագրում չափազանց կարևորում էր խաղաղության հաստատումը հատկապես թուրքերի հետ[3]: Սակայն նրան չի հաջողվում ստեղծել ցանկալի կոալիցիոն կառավարություն[4]: Նա գալիս է այն եզրակացության, որ Հայաստանին անհրաժեշտ է «ձախ» բնույթի կառավարություն և առաջարկում է Ս. Վրացյանի թեկնածությունը: Ս. Վրացյանի քաղաքական դիրքորոշման վերաբերյալ հատկանշական է այդ օրերին զինվորական նախարար Ռուբենի կարծիքը: Խոսելով Հանրապետությունում առկա քաղաքա-

---

[1] Ա. Խ ա տ ի ս յ ա ն. Հայաստանի Հանրապետության ծագումն ու զարգացումը, Բ տպգր., 1966, էջ 296–297, «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն)», Երևան, 2000, էջ 340–341, վավ. №300, 301: Կ. Ս ա ր գ ս յ ա ն. Հայ-վրացական հարաբերությունները 1918–1921 թթ., Երևան, 2002, էջ 182–189:

[2] Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով. հ. Ե, Պեյրութ, 1966, էջ 180:

[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 198, ց. 1, գ. 10, թ. 6: Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 195–197 և այլն:

[4] Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, հ. Ե, էջ 181:

կան տարբեր հոսանքների դիրքորոշումների, Դաշնակցություն կուսակցության ներսում կուսակցական և պետական սկզբունքների հակասության մասին, նա գրում է. «Մի խումբ էլ կար միջին տեղը բռնող Վրացյանի, Ջամալյանի գլխավորությամբ, որ կամուրջն էր այսպես ասած ռուսական կամ բոլշևիկյան ուղղության և ծայրահեղ անկախության կողմնակիցների կամ ավելի շուտ ազդայնականների միջև»[5].– և ապա,– «Սրանց ձգտումն էր Հայաստանը և կառավարությունը հայացնել լեզվով, սովորույթով ու օրենքով, անխնա լինել բոլոր նրանց դեմ, որոնք դեմ են անկախ Հայաստանին և տատանվողներին չհավատալ»[6]: 1920 թ. աշնանը այս հակասությունները, իրարամերժ մոտեցումներն ավելի սրվեցին: Հատկապես ընդգծվեցին թուրքամետ ու ռուսամետ հոսանքների կողմնորոշման տարբերությունները:

1920 թ. նոյեմբերի 23-ին Հայաստանի Հանրապետության Խորհրդարանի արտակարգ նիստում, որն ընթանում էր Ամերիկայից նոր վերադարձած Հովհաննես Քաջազնունու նախագահությամբ, Համո Օհանջանյանի Բյուրո-կառավարությունը ներկայացնում է իր հրաժարականը: Այն ընդունվում է ձայների մեծամասնությամբ՝ 34 կողմ և մեկ ձեռնպահ: Նիստում ձայների նույն հարաբերակցությամբ վարչապետ է ընտրվում Խորհրդարանի անդամ, Հ. Օհանջանյանի կառավարության գյուղատնտեսության և պետական գույքի նախարար Սիմոն Վրացյանը[7]:

Նա վկայում է, որ առաջարկը եղել է անսպասելի, ինքն այն ընդունել և համաձայնություն է տվել, որովհետև գա կուսակցության որոշումն է և ինքը պարտավոր է ենթարկվել կարգապահությանը[8]:

Խորհրդարանի նիստում նորընտիր վարչապետը հանդես է գալիս կարճ ելույթով. «Ես գիտակցում եմ, թե քաղաքական այս բացառիկ պայմաններում Խորհրդարանն ինչպիսի ծանր բեռ է դնում իմ ուսերին: Իմ կազմելիք կառավարությունը հաջողություն կունենա, եթե երկիրը և Հայաստանի գերագույն օրենսդրական մարմինը լինեն նրա հետ: Ես հավատացած եմ, որ ձեր և երկրի աջակցությամբ կհաջողվի մեզ տագնապալի այս վիճակից դուրս գալ պատվով: Իմ կողմից ես խոստանում եմ թափել ամեն ճիգ և ոչինչ չխնայել մեր հանրապետության բարգավաճման համար: Խնդրում եմ 24 ժամ միջոց տալ՝ կառավարության կազմը ձեզ ներկայացնելու համար»[9]: Հաջորդ օրը, նոյեմբերի 24-ին, Ս. Վրացյանն հաստատման է ներկայացնում իր կառավարության կազմը: Ինքը՝ Վրացյանը, բացի վարչապետի պաշտոնից, ստանձնում է նաև արտաքին գործոց նախարարի պաշտոնը: Մնացյալ պաշտոնները բաշխվում են հետևյալ կերպ. ռազմական նախարար՝ Դրաստամատ Կանայան, արգարադատության նախարար՝ Ա. Խոնդկարյան, ֆինանսների՝ Հ. Տերտերյան, գյուղատնտեսության և աշխատանքի՝ Ա. Հովհաննիսյան, հանրային կրթության՝ Վ. Մինախորյան:

---

[5] Ռ ո ւ բ ե ն. Հայ հեղափոխականի մը հիշատակներ. հ. Է, Գ. հրատ., Թեհրան, 1982, էջ 346–347:

[6] Նույն տեղում:

[7] ՀԱԱ, ֆ. 198, ց. 1, գ. 75, թթ. 1–4: «Հառաջ» (Երևան), 25.XI.1920: Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 520:

[8] Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, հ. Ե, էջ 181:

[9] «Հառաջ», 25.XI.1920: Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 520:

թափուր են մնում ներքին գործոց, հաղորդակցության և խնամատարության նախարարների պաշտոնները, որոնք ժամանակավորապես վերաբաշխվում են Ս. Վրացյանի, Հ. Տերտերյանի և Ա. Խոնդկարյանի միջև[10]: Կառավարության կազմն այդպես էլ մինչև վերջ չի համալրվում: Ա. Խոնդկարյանը և Վ. Մինախորյանը սոցիալիստ-հեղափոխականներ էին, մյուսները՝ դաշնակցականներ[11]: Վրացյանը հավելում է նաև խնամատարության նախարարի բժիշկ Ռ. Յուզբաշյանի անունը:

Ս. Վրացյանը նիստում ներկայացնում է նաև կառավարության հայտարարագիրը (դեկլարացիան): Վերլուծելով ու գնահատելով անցյալում տարվող քաղաքական կուրսը, բնութագրելով ստեղծված իրավիճակը և ներկայացնելով կառավարության ծրագիրը Հանրապետության ներքին կյանքի և արտաքին հարաբերությունների վերաբերյալ, նա իրավացիորեն կարևորագույնը համարում է խաղաղության, հաշտության հաստատումը Թուրքերի և հարևան երկրների հետ. «Եվ այսպես երկիրն ապրում է ներքին ծանր տագնապ, որ ավելի ևս սաստկանում է արտաքին դժվարությունների պատճառով: ...Մեր գործունեության նշանաբանն է լինելու անկեղծ հաշտություն Տաճկաստանի հետ և համերաշխության ու խաղաղ համակեցություն բոլոր հարևան ժողովուրդների հետ»[12]:

Նոյեմբերի 24-ին Ս. Վրացյանը իբրև վարչապետ, ելույթ է ունեցել նաև դաշնակցության ներկայացուցչական խորհրդի նիստում: Կառավարական հայտարարագրում հնչած քննադատությունն իմպերիալիստական երկրների քաղաքականության հասցեին, այս ելույթում ավելի սուր ու մերկացնող բնույթ է կրում: Հատկապես սթափ ու ճշմարիտ է նրա բացասական գնահատականը Հայաստանի ու հայ ժողովրդի հանդեպ Անտանտի, Անգլիայի բռնած դիրքորոշման վերաբերյալ. «Մեր փորձը պետք է բերե մեզ այն համոզման, որ մենք պետք է ամփոփվինք մեր ուժերի շրջանում և դուրս չգանք որոնելու նոր ազդեցության շրջանակներ, որոնք մեզ համար կարող են լինել նույնքան աղետաբեր, որքան և մինչև այժմ եղածը, որովհետև արտաքին ուժերը միշտ և ամենից առաջ իրենց շահերն ի նկատի ունին: Նրանք ամեն ժամանակ աշխատում են առնել և ոչ թե տալ: Մենք պետք է ունենանք մեր սեփական օրիենտացիան»[13]:

Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Ս. Վրացյանի գլխավորած կառավարությունը գործել է 10 օր և ունեցել է 4 (5՝) նիստ ու ելնելով քաղաքական իրադրությունից՝ ընդունել որոշումներ, հաստատել օրենքներ:

Կառավարության նոյեմբերի 25-ի նիստում քննարկվել են բացառապես ընթացակարգային հարցեր, որոշումներ են ընդունվել կառավարության նիստեր գումարելու ժամանակի, տեղության, պետական հաստատություններում աշխատանքային օրվա, նախարարների օգնականների նիստերին չմասնակցելու և նմանատիպ այլ հարցերի վերաբերյալ[14]: Նոյեմբերի

---

[10] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 119, թ. 75 և շրջ.: «Հառաջ», 26.XI.1920: Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետությունն, էջ 521:
[11] Ս. Վ ր ա ց յ ա ն, Հայաստանի Հանրապետությունն, էջ 521:
[12] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 351, վավ. № 317:
[13] Նույն տեղում, էջ 353, վավ. № 318:
[14] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 162[II], թ. 343:

27-ի նիստում վարչապետը հանդես է եկել հայ-վրացական հարաբերություններին նվիրված զեկուցումով: Նրա ձեռնարկած միջոցները նիստը գտնում է բավարար: Ընդունվում է որոշում չեզոք դոտուց ժողովրդի գաղթն արգելելու մասին[15]: Այնուհետև քննարկվում է Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանի առաջարկությունը «արտասահմանում Հանրապետության ամեն տեսակի հարստությունները իր լիազորության հանձնելու մասին»: Առաջարկությունը մերժվում է, փոխարենը հանձնարարվում է այդ նպատակով ստեղծել հատուկ միջգյուղային հանձնաժողով[16]: Նույն նիստում օրենք է ընդունվում 1920 թ. մայիսի 8-ի ժամանակավոր օրենքով ստեղծված արտակարգ դատարանների վերացման վերաբերյալ, միաժամանակ արդարադատության նախարարությանը հանձնարարվում է օրինագիծ մշակել դատարանների վերակազմության մասին[17]: Հաստատվում է ռազմական նախարար Դ. Կանայանի ներկայացրած օրինագիծը 36–37 տարեկան զինապարտներին բանակից զորացրելու[18], համապատասխան որոշում է ընդունվում բանակը բավարար չափով աղով և շաքարով ապահովելու մասին[19]:

Կառավարության վերջին նիստը տեղի է ունեցել դեկտեմբերի 2-ին, որի ընթացքում օրենքներ են ընդունվել Գուրգեն Մուրադյանին ներում շնորհելու, զորացրվողների տարիքային երկու խմբերին ևս երեքը՝ 33, 34 և 35 տարեկանների խմբեր ավելացնելու մասին: Հաստատված օրենքի համաձայն բանտարկությունից ազատ են արձակվել քաղաքական բոլոր կալանավորները[20]: Այս վերջին օրենքն ընդունվել է բոլշևիկների հարկադրանքով: 1920 թ. նոյեմբերի 28-ին Խորհրդային Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Բ. Լեգրանը բողոք է հղել ՀՀ կառավարությանը առ այն, որ Հանրապետության կոմունիստները ենթարկվում են հալածանքների: Հայկական կողմը քայլեր է ձեռնարկել այդ ուղղությամբ: Ավելորդ չենք համարում նշել, որ ռուսական կողմը ևս խոստացել էր ազատ արձակել Խորհրդային Ռուսաստանում ու Ադրբեջանում բանտարկված դաշնակցականներին, բայց խոստումը մնացել է թղթի վրա[21]: Հավելենք նաև, որ Վրացյանի կառավարության աշխատակազմը նախորդների պես բաղկացած էր 21 հոգուց, ներառյալ տեխնիկական ծառայողները[22]:

Համաձայն մի վավերագիր-շրջաբերականի, կառավարությունը նիստ է ունեցել նաև դեկտեմբերի 1-ին[23], սակայն օրակարգի և մասնակիցների վերաբերյալ այլ տվյալներ չունենք:

Ս. Վրացյանին վիճակված էր իր տրամաբանական վերջնագծին հասցնել ավարտին մոտեցող հայ-թուրքական ու հայ-ռուսական բանակցությունները: Պաշտոնի բերումով նա և՛ վարչապետ էր, և՛ արտաքին գործոց

---

[15] Նույն տեղում, գ. 133, թ. 268:
[16] Նույն տեղում:
[17] Նույն տեղում, թ. 270:
[18] «Հայաստանի Հանրապետության Պառլամենտի օրենքները» (այսուհետև՝ «Պառլամենտի օրենքները»), Երևան, 1998, էջ 505:
[19] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 133, թ. 270:
[20] «Պառլամենտի օրենքները», էջ 505:
[21] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427[1], թթ. 419–423: «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 365, վավ. № 332:
[22] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 133, թ. 162:
[23] ՀԱԱ, ֆ. 203, ց. 1, գ. 127, թ. 151:

նախարար: Նա մասնակցեց այդ երկրների հետ տարվող բանակցություններին և չնայած ղրանց արդյունքը կանխորոշված էր Կարսի անկումով, ճիգ ու ջանք գործադրեց ժողովրդի ֆիզիկական դոյության, երկրի անկախության պահպանման ուղղությամբ:

1920 թ. նոյեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետությանը գլխովին պարտության մատնած և Ալեքսանդրապոլում տեղակայված թուրքական զորքերի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան ներկայացրեց իր վերջին վերջնագիրը, որի պահանջներն ավելի խիստ էին ու դաժան, քան նախորդներինը: Վերջնագրի ժամկետը լրանում էր նոյեմբերի 25-ին ժամը 6:45-ին: Հաշտության բանակցությունները նախատեսվում էր սկսել նոյեմբերի 24-ի երեկոյան[24]: Որպես այս և Ռուսաստանի հետ տարվող բանակցությունները սկսելու նախապայման՝ թե՛ քեմալական Թուրքիան, թե՛ բոլշևիկյան Ռուսաստանը հայկական կողմից պահանջում էին հրաժարվել Սևրի պայմանագրից, որը քանիցս արծարծվել էր հայ-թուրքական և հայ-ռուսական բանակցություններում[25]: Այդ կապակցությամբ Ս. Վրացյանը գրում է. «...փոխանակ Սևրի դաշնագրի իրագործման, Հայաստանն ունեցավ նոր պատերազմ փաստորեն երկու ճակատի վրա՝ Թուրքիայի և Ռուսաստանի հետ»[26]:

Հ. Օհանջանյանի կառավարությունը նախքան հրաժարական տալը հաստատել էր քեմալական Թուրքիայի ներկայացուցիչ Կարաբեքիր փաշայի հետ բանակցություններ վարելու նպատակով Ալեքսանդրապոլ մեկնող պատվիրակության կազմը: Այն գլխավորում էր Ա. Խատիսյանը, անդամներն էին՝ նախարար Ա. Գյուլխանդանյանը, Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանը, պառլամենտի անդամներ Վ. Մինախորյանը, Լ. Զարիֆյանը և այլք: Պատվիրակությունն Ալեքսանդրապոլ մեկնեց նոյեմբերի 23-ի լույս 24-ի գիշերը[27]:

Վրացյանն, անշուշտ, տեղյակ էր ու մասնակից երկրի համար ճակատագրական նշանակություն ունեցող անցուդարձերին և՛ իբրև կառավարության անդամ և՛ իբրև Խորհրդարանի դաշնակցական ֆրակցիայի համանախագահ: Սակայն այլ էր նրա կարգավիճակը վարչապետի ու արտաքին գործոց նախարարի պաշտոններում: Ալեքսանդրապոլում ընթացող գժվարին բանակցությունները մոտենում էին ավարտին, Խորհրդային Ռուսաստանի զինվորներն Իջևանում էին, և Հայաստանի խորհրդայնացումն արդեն անխուսափելի էր: 1920 թ. դեկտեմբերի 1-ին Ա. Վրացյանը հեռագրում է Ալեքսանդրապոլ՝ պատվիրակության ղեկավար Ա. Խատիսյանին. «Բյուրոն, ֆրակցիան, կառավարությունը որոշեցին ընդունել կարմիրների առաջարկը սովետիզացիայի մասին: Դրել ենք որոշ պայմաններ, որ ճանաչվի Հայաստանի անկախությունը, հաշտություն կնքել տաճիկների հետ, թույլ չտալ քաղաքացիական կռիվ, մտցնել կառավարության մեջ

---

[24] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 517, Ն ո ւ յ ն ի՝ Կյանքի ուղիներով, էջ 177, Ա. Խ ա տ ի ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 254–255:

[25] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 296–361, վավ. №№ 252, 257, 285, 286, 312, 328 և այլն:

[26] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 517:

[27] Նույն տեղում, էջ 519: Ն ո ւ յ ն ի՝ Կյանքի ուղիներով, հ. Ե, էջ 177, Ա. Խ ա տ ի ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 294 և այլն:

մերոնցից»[28]: Հաջորդ օրը՝ դեկտեմբերի 2-ի կեսգիշերից հետո, երբ Վրացյանն արդեն իշխանությունը փոխանցել էր Դրոյին ու Սիլինին[29], Քեմալական Թուրքիայի հետ հաշտության պայմանագիրը ստորագրվում է[30]:

Որպեսզի պայմանագիրը իրավական ուժ ստանար, ստորագրելուց հետո մեկ ամսվա ընթացքում այն պետք է վավերացվեր Հայաստանի Խորհրդարանի և Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից, ինչն այդպես էլ չաբվեց, հետևաբար այն կարող էր չճանաչվել Հայաստանի նոր իշխանությունների կողմից[31]:

Ս. Վրացյանի կառավարությունն իր 10-օրյա գործունեության ընթացքում անմիջական հարաբերություններ է ունեցել Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչության հետ: «Այստեղ արդեն ես կարող եմ խոսել իբրև դեպքերին անմիջապես մասնակից մեկը, որովհետև նոյեմբ[երի] 24-ից սկսած, ես էի վարում Հայաստանի արտաքին գործոց նախարարությունը»,– գրում է Վրացյանը[32]: Վարչապետի պաշտոնը ստանձնելուց հետո նա փորձում է բարեկամական հարաբերություններ հաստատել Խորհրդային Ռուսաստանի հետ՝ Հայաստանում նրա ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջոցով: Վերջինս Բաքվից Երևան էր վերադարձել նոյեմբերի 19-ին: Նա Մոսկվա էր ուղևորվել 1920 թ. հոկտեմբերի 28-ին կազմված հայ-ռուսական պայմանագրի նախագիծը ստորագրելու ու հաստատելու նպատակով: Պայմանագիրը Հայաստանի համար բավականին նպաստավոր կետեր էր պարունակում: Սակայն Լեգրանը կանգ առավ Բաքվում: Նոյեմբերի 4-ին Կավբյուրոյի և Ադրբեջանի ԿԿ(բ) Քաղբյուրոյի միացյալ նիստում որոշում է ընդունվում պայմանագիրը լայնորեն քննարկել և դրա համար Լեգրանին ուղարկել Մոսկվա: Մեզ համար առավելապես ուշագրավ են որոշման 2-րդ և 4-րդ կետերը: Ըստ 2-րդի, քաղաքական և ռազմավարական առումներով նպատակահարմար չի համարվում Նախիջևանը և Զանգեզուրը Հայաստանին տալը և 4-րդ կետի համաձայն, այդ տեսակետի հիմնավորման մշակումը հանձնարարվում է Ն. Նարիմանովին: Իսկ ՌԿԿ(բ) հետ պայմանագրի քննարկումը՝ Ստալինին[33]: Ըստ Բաքվում ՀՀ գիվանագիտական ներկայացուցիչ Մ. Հարությունյանի զեկույցի, հայ բոլշևիկներին թույլ չի տրվում մասնակցել համաձայնագրի քննարկմանը[34]: Նույն օրը Քաղբյուրոյի նիստի որոշման մասին Ստալինի և Օրջոնիկիձեի ստորագրությամբ հեռագիր է ուղարկվում Խորհրդային Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Չիչերինին, պատճենը՝ Լենինին: Հեռագրում այն կարծիքն է հայտնվում, որ պայմանագիրը պետք է հանգամանալից քննարկվի և ենթարկվի էական փոփոխության, Թուրքիան պետք է Ռուսաստանի ճնշման տակ նահանջի մինչև 1914 թ. սահմանը[35]: Թուրքական առաջխաղացումը կասեցնելու նպատակով Ստալինի և Օրջոնիկիձեի կողմից հե-

---

[28] ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 248, թ. 1:
[29] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 534:
[30] Ա. Խ ա տ ի ս յ ա ն. Նշվ. աշխ., էջ 310:
[31] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 537:
[32] Ս. Վ ր ա ց յ ա ն. Ինչո՞ւ և ինչպե՞ս խորհրդայնացավ Հայաստանը.– «Հայրենիք», 1941, №3, էջ 92:
[33] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 327, վավ. №282:
[34] ՀԱԱ, ֆ. 278, ց. 1, գ. 30, թ. 158:
[35] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 328, վավ. № 283:

ռագրով Լենինից և Չիչերինից պահանջվում է պատվիրակություն գործուղել Թուրքիա՝ Քեմալի հետ բանակցելու համար[36], իսկ մի այլ հեռագրով էլ առաջարկվում է հատուկ լիազոր նշանակել Մդիվանուն[37]: Հայաստանի Հանրապետության ճակատագրի հարցում, ինչպես վկայում են բերված վավերագրերը, վճռական դեր են խաղում վրացիները և կովկասյան թաթարները՝ Ստալինը, Օրջոնիկիձեն, Մգիվանին, Նարիմանովը, Կորխմազովը, Շախթախտինսկին: Նոյեմբերի 6-ին Սիլինին ուղղված նամակում Լեգրանը խոստովանում է, որ Ստալինի ղեկավարած խորհրդակցությունը բացասական վերաբերմունք արտահայտեց դեպի հայ-ռուսական պայմանագիրը, և «մենք փաստորեն ոչինչ չենք կարող անել Թուրքերի հարձակման կապակցությամբ»[38]: Միաժամանակ նա հաղորդում է, որ մեկնում է Մոսկվա: Բայց, ինչպես նշեցինք, նա Մոսկվա չհասավ և Թիֆլիսով Երևան վերադարձավ միայն նոյեմբերի 19-ին:

Նոյեմբերի 6-ի՝ Ստալինին հղած Չիչերինի հեռագրից պարզվում է, որ Տրոցկին դեմ չէր «սովետիզացիայի» նպատակով Հայաստան զորք ուղարկելուն, բայց հարցը նախ պետք է լուծվի քաղաքականապես: Հեռագրից պարզվում է նաև մի կարևոր հանգամանք. Հայաստանը միջնորդության խնդրանքով դիմել է Խորհրդային Ռուսաստանին[39]: Վերջինս կատարում է միջնորդական առաքելության առաջին քայլը՝ Չիչերինը հեռագրով հրահանգում է Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչին քեմալականներին զենք մատակարարել միայն այն դեպքում, եթե Հայաստանը Ռուսաստանի միջնորդությունն ընդունի առաջարկված պայմաններով և եթե Թուրքերը պարտավորվեն Բաթումից դուրս մղել Անտանտի զորքերը՝ վերջինիս Բաթում մտնելու դեպքում: Թուրքերի հետ առայժմ չխոսել մինչև 1914 թ. սահմանը նրանց նահանջի մասին, այլ միայն բանակցել հարձակումը կասեցնելու և զինադադարի մասին[40]: Ռուսաստանն ընդունում է միջնորդական պարտավորությունը Հայաստանի և Թուրքիայի միջև և Բ. Մդիվանիին նշանակում է իր լիազոր ներկայացուցիչը, որին գործուղում է ռազմական գործողությունների շրջանը միջնորդական առաքելությունը գործադրելու նպատակով[41]: Թուրքական բանակի առաջխաղացումը, համաձայն Մդիվանիի հաղորդման, նոյեմբերի 12-ին շարունակվում է և միայն 13-ին, Ռուսաստանի միջնորդության շնորհիվ այն դադարեցվում է: Ստալինը Լենինին տեղեկացնում է Մդիվանիին տված հրահանգների մասին, միաժամանակ հայտնելով, որ պարտավորեցրել է վերջինիս ուշադրության կենտրոնում պահել մասնավորապես Բաթումի օկրուգը, հին սահմանի հարցը ուղղակիորեն չբարձրացնել, սահմանափակվել խառը հանձնաժողովի կազմակերպմամբ և դրանում բոլշևիկների մասնակցությամբ, պառակտել դաշնակցությունը ներսից, տչխատել վերջինիս ձախ թևն ընդգրկել Հեղկոմի կազմում[42]:

---

36 Նույն տեղում,, վավ. № 284:
37 Նույն տեղում, վավ. № 285:
38 Նույն տեղում, էջ 330, վավ. № 287:
39 Նույն տեղում, էջ 329 - 330, վավ. № 286:
40 Նույն տեղում, էջ 333, վավ. № 290:
41 Նույն տեղում, էջ 336, վավ. № 295:
42 Նույն տեղում, էջ 346, վավ. № 308:

Իսկ ռազմական գործողությունները շարունակվում էին[43]: Թուրքիայի կողմից նոյեմբերի 8-ին Հայաստանին ներկայացված վերջնագրի պահանջներին Խորհրդային Ռուսաստանը տեղյակ էր[44]: Հայաստանի և Թուրքիայի միջև նոյեմբերի 18-ին զինադադար է կնքվում, որի վերջնական ժամկետն էր, ինչպես վերը նշեցինք, նոյեմբերի 24-ի ժամը 6:45-ը: Սակայն այս կապակցությամբ ուշագրավն այն է, որ զարմանալի զուգադիպությամբ նոյեմբերի 19-ին Երևան է ժամանում Բ. Լեգրանը[45]: Վավերագրերի հաղորդած տեղեկություններն ավելի են ամրապնդում ռուս-թուրքական պայմանավորվածության իրողությունը: Ռուսաստանն ակնդետ հետևում էր թուրքական բանակի առաջխաղացմանը:

Նոյեմբերի 19-ին Բ. Լեգրանը Բ. Մդիվանիի մասնակցությամբ երեք ժամ տևողությամբ զրույց է ունենում վարչապետ Հ. Օհանջանյանի և զինվորական նախարար Ռ. Տեր-Մինասյանի հետ: Լեգրանը զրույցը վարում է այնպես, կարծես անտեղյակ է ծավալվող իրադարձություններին ու թուրքերի մտադրություններին[46]:

Հետաքրքիր է, որ այս զրույցի ընթացքում չի արծարծվում Հայաստանով Թուրքիա տանող ճանապարհի տրանզիտի հարցը, որը վերջին ամիսներին զբաղեցնում էր ռուսական կողմին և Հայաստանին ներկայացվող հիմնական պահանջն էր[47]: Այն, ըստ երևույթին, Հայաստանի գրավումով ու խորհրդայնացումով կհամարվեր լուծված:

Ինչպես ասվեց, նոյեմբերի 23-ին Հայաստանի Խորհրդարանը վարչապետ է ընտրում Ս. Վրացյանին, որն էլ անմիջապես բանակցություններ է սկսում Բ. Լեգրանի հետ: Բանակցությունները տարվում էին հետևյալ հարցերի շուրջ. Խորհրդային Ռուսաստանի օգնությունը թե ինչպես և ինչով կարող է Ռուսաստանն օգնել Հայաստանին: Վրացյանը իր հուշերում գրում է, որ այդ հարցին Լեգրանը պատասխանում է, թե պետք է ետ կանչել Ա. Խատիսյանի պատվիրակությունը Ալեքսանդրապոլից, մերժել թուրքերի պահանջները, խորհրդային զորք մտցնել Հայաստան: Վրացյանն առարկում է՝ ասելով, որ ներկա պահին Հայաստանի սահմանների մոտ անհրաժեշտ քանակությամբ ռուսական զորք չկա և ապա ինչ երաշխիք, որ նախքան ռուսների Երևան հասնելը, թուրքերը, բանակցություններն ընդհատելու դեպքում, ավելի մոտ լինելով՝ ավելի շուտ չեն մտնի Արարատյան դաշտ՝ ավեր ու մահ սփռելով իրենց շուրջը: Լեգրանի պատասխանին, թե թուրքերը, իմանալով ռուսական զորքի Հայաստան մտնելու մասին, չեն համարձակվի դիմել նման քայլի, Վրացյանը նկատում է, որ եթե դա այդպես է, ապա ռուսական կողմի դիվանագիտական միջամտությունը բավական կարող է լինել թուրքական հարձակումը կասեցնելու համար, որը, սակայն, չի արվում: Պարզ է, որ թուրքերը բոլշևիկյան Ռուսաստանի համար ավելի կարևոր նշանակություն ունեին, քան

---

[43] Նույն տեղում, էջ 345, վավ. № 307:
[44] Նույն տեղում, էջ 347, վավ. № 310:
[45] Նույն տեղում, էջ 361, վավ. № 328:
[46] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427[1], թթ. 419–423 և շրջ.:
[47] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 253–290, վավ. №№ 217, 218, 220, 221, 221, 223, 235, 243 և այլն:

ռուսները թուրքերի համար[48]: Վրացյանը հասկանում էր, որ Հայաստանի համար ռուսները թուրքերի հետ չէին կռվի: Հավելենք, որ Վրացյանին դուցե ծանոթ չէր նոյեմբերի 16-ի Ստալինի հեռագիրը, որով նա Լենինին տեղյակ էր պահում Մդիվանիին տրված «գաշնակների պատճառով թուրքերի հետ չկռվել» հրահանգի մասին[49]: Բանակցությունների ժամանակ Եվրոպայից, Ամերիկայից հրաժարվելու ռուսական կողմի պահանջին ի պատասխան՝ Վրացյանն ասում է, որ հայ ժողովուրդն առանց նրանց օգնության սովամահ կլինի, իսկ Ռուսաստանն իրական օգնություն չի կարող ցույց տալ, քանի որ ռուս ժողովուրդն ինքն էլ պարենային տագնապի մեջ է[50]: Ս. Վրացյանը պնդում է Հայաստանի անկախությունը պահպանելու անհրաժեշտությունը՝ չեշտելով հատկապես Հայկական հարցի իրավատերը լինելու հանգամանքը, որը կկորցներ խորհրդայնացման պարագայում: Ինչ վերաբերում է բազմիցս արծարծված ճանապարհների խնդրին, ապա Հայաստանը պատրաստ է դրանք տրամադրել Ռուսաստանին. անհրաժեշտ է Հայաստանի բարեկամությունը, այն կա:

«Բանակցություններն արդյունք չտվին»[51],– գրում է Վրացյանը: Եվ չէին էլ կարող տալ, քանի որ Հայաստանի խորհրդայնացման հարցը նախորդ ամիսներին արդեն լուծվել էր Մոսկվայում և Բաքվում[52]: Ելնելով ժողովրդի ֆիզիկական դոյության ապահովության խնդրից՝ Ալեքսանդրապոլում բանակցությունները շարունակվում են թուրքերի, Երևանում՝ Լեգրանի հետ: Իսկ Ռուսաստանի լիազոր միջնորդ Մդիվանին գտնվում էր Ալեքսանդրապոլում: Թուրքերը կտրականապես մերժում են ռուսների միջնորդությունը: Լեգրանը դրում է Չիչերինին, որ այդ մերժումն է պատճառը, որ Մդիվանին հարկ չի համարում թուրքերին պայմաններ առաջադրել Հայաստանի վերաբերյալ: Մեկ այլ հաղորդման մեջ էլ Լեգրանը հայտնում է, որ Մդիվանին ամբողջովին թուրքերի ազդեցության տակ է[53]: Իրավունք չունենք չհավատալու Ա. Խատիսյանին, որը վկայում է. «...ան ավելի շատ խանգարեց մեզ, քան օգնեց»[54]:

Այդ միջոցին Բաքվում կազմված Հայաստանի հեղկոմը Կարմիր բանակի ոչ մեծաթիվ զորամասերի ուղեկցությամբ նոյեմբերի 29-ին մուտք է գործում Իջևանի գավառ և հայտարարում խորհրդային իշխանության հաղթանակը ողջ Հայաստանում[55]: Վրացյանը լուրն ստանալով գիմում է Լեգրանին, որը նախ հերքում, ապա որոշ ժամանակ անց հաստատում է այն[56]: «Հայաստանի խորհրդայնացումը այլևս անխուսափելի էր»,– գրում է Վրացյանը[57]: Կարծում ենք, Լեգրանը տեղյակ չէր այդ գործողությանը: Գ. Չիչերինին շտապ առաքված ռադիոհեռագրում Լեգրանը պահանջում է

---

[48] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 529:
[49] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 346, վավ. № 308:
[50] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 530:
[51] Նույն տեղում, էջ 530–531:
[52] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 285, վավ. № 237, էջ 303, վավ. № 263, էջ 323, վավ. № 277, էջ 328, վավ. № 283, էջ 330, վավ. № 286:
[53] Նույն տեղում, էջ 357, վավ. № 323, էջ 364, վավ. № 330:
[54] Ա. Խ ա տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 263:
[55] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 370, վավ. № 335, էջ 371, վավ. № 337, էջ 374, վավ. № 340:
[56] Ս. Վ ր ա ց յ ա ն. Ինչո՞ւ և ինչպե՞ս..., էջ 92–94:
[57] Նույն տեղում, էջ 93:

անհապաղ դադարեցնել ռուսական զորքի առաջխաղացումը և այն հետաձգել մինչև դեկտեմբերի 3-ը[58]: Նա գտնում է, որ հակառակ պարագայում խորհրդային զորքերի մուտքը կդիտվի իբրև թշնամության արտահայտություն և հարձակում Հայաստանի վրա: Նա նշում է, որ ինքը բանակցություններ է վարում Դրոյի հետ խաղաղ ճանապարհով խնդիրը լուծելու նպատակով: Լեգրանը Մոսկվայից պահանջում է նաև համաձայնեցնել գործողություններն իր հետ, հակառակ դեպքում հրաժարվում է պատասխանատվություն կրելուց[59]: Եվ, հիրավի, Հայաստանի Հանրապետության կառավարությունն իրավաբանորեն ու վաստացի դեռևս գործում էր: Լեգրանը չէր կարող, թեկուզ ձևականորեն, հաշվի չառնել այդ իրողությունը: Վրացյանը գրում է. «Ըստ երևույթին Լեգրանի այդ և հետագա քայլերը բացատրվում են նրանով, որ արտաքին աշխարհի առաջ «զավթիչ» չերևալու համար խորհրդայնացումը կատարել «խաղաղ» եղանակով, այսինքն՝ Հայաստանի կառավարության հոժարությամբ»[60]: Լեգրանին հայտնի չէր 1920 թ. սեպտեմբերի 17-ին Բաքվում կազմված ու մշակված այն ծրագիրը, ըստ որի «թուրքական զորքերը կսկսեն հարձակվել Հայաստանի վրա, իսկ մենք մեր մամուլում և Եվրոպայում գտնվող աղատ մարմինների միջոցով սարսափելի աղմուկ կբարձրացնենք նոր հայ-թուրքական կոտորածի մասին, այն վերջնականապես դադարեցնելու անհրաժեշտության և կոտորածի դադարեցման համար մեր զորքը Հայաստան կմտնի...»[61]:

1920 թ. դեկտեմբերի 1-ին Լեգրանը Հայաստանի կառավարության նախագահին է հանձնում հետևյալ գրությունը. «Վկայակոչելով երեկ տեղի ունեցած մեր խոսակցությունն ընկ. Դրոյի ներկայությամբ, նկատի ունենալով ՌԿԿ ԿԿ ընդունած որոշումը Սոցիալիստական Խորհրդային անկախ Հայաստանի Ռազմա-հեղափոխական ժամանակավոր կոմիտե կազմավորելու մասին, անհրաժեշտաբար հաստատում եմ պարզելու Հայաստանի ներկա կառավարության վերաբերմունքը Հայաստանում խորհրդային իշխանություն ստեղծելու հարցի վերաբերյալ:

Հայաստանի հեղկոմը իմ ստացած տեղեկությունների համաձայն, մտել է Հայաստանի սահմանները:

Հայաստանում ՌՍՖՍՌ լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրան»[62]:

Վերջնագրի տեսքով ներկայացված այս հայտարարությունը ևս, ինչպես նախորդ դեպքերում, քննարկվում է Խորհրդարանի դաշնակցության խմբակցության դեկտեմբերի 1-ի երեկոյան վերջին նիստում: Վերջնական որոշում է ընդունվում իշխանությունը հանձնել Դրոյին իբրև զորաբանակի ընդհանուր հրամանատարի[63] և նրան խորհրդական-կոմիսար նշանակել Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Սիլինին[64]: Լեգրանն այդ լուրը դեկտեմբերի 2-ին ռադիոհեռադրով հաղորդում է Օրջոնիկի-

---

[58] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 374, վավ. № 340:
[59] Նույն տեղում:
[60] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 527:
[61] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 285, վավ. № 237:
[62] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 581, թ. 352 (գործավարական թարգմ. ռուսերենից):
[63] Ս. Վ ր ա ց յ ա ն. Կյանքի ուղիներով, հ. Ե, էջ 200, Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները. Երևան, 1998, էջ 34:
[64] Ս. Վ ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, էջ 534–535:

ձեին[65]: Դեկտեմբերի 2-ին կողմերը ստորագրում են երկու փաստաթուղթ, որոնցից մեկը կոչվում է ակտ, հայտնի է հայերեն և ռուսերեն տպագիր օրինակներով, մյուսը հայ-ռուսական համաձայնագիր: Նախքան ակտը կազմելը, ըստ Վրացյանի, կնքվել է համաձայնագիր ՌՍԴԽՀ և Հայաստանի կառավարության միջև: Հայաստանի Հանրապետության կողմից ստորագրել են Դրոն և Հ. Տերտերյանը, Խորհրդային Ռուսաստանի կողմից՝ Բ. Լեգրանը: Ակտի բովանդակությունը հեռագրով հաղորդվել է տեղական իշխանություններին, նաև Վրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեկզադյանին:

Մի ուշադրավ փաստ. դեկտեմբերի 2-ին, ռադիոյով ստացած տեղեկության համաձայն, ԱՄՆ պրեզիդենտ Վ. Վիլսոնը Ազգերի Լիգային տեղեկացնում է, որ ինքը համաձայն է միջնորդ լինել Հայաստանի և Թուրքիայի միջև, և որ կարող է բարոյական ճնշում գործադրել Թուրքիայի վրա[66]: Այս առումով ուշադրավ է Զ. Մսերլյանի հետևյալ կարծիքը. «Երբ Արևելյան Հայաստանը վտանգված էր և հայերը կը պարտավորեին Թուրքիո գլուխ ծռել, նոյեմբերի 22-ին էր միայն որ Նախագահ Ուիլսրն կը ստորագրեր իր իրավարարությունը Հայաստանի սահմաններու մասին, որ պիտի ընդգրկեր Վանը, Մուշը, Էրզրումը և Տրապիզոնը: 10 օգոստոսեն 22 նոյեմբեր այս ձգձգումը ի միջի այլոց քաջալերած էր թուրքերը հայ-թրքական սպատերազմը սկսելու»[67]:

Ս. Վրացյանի կառավարության կողմից ընդունված վերջին փաստաթուղթը, ըստ էության, հրաժարականի հայտարարություն է, որը ստորև բերում ենք ամբողջությամբ:

«2 դեկտեմբերի 1920 թ., Երևան

ԱԿՏ

Ի նկատի ունենալով արտաքին հանգամանքների շնորհիվ երկրում ստեղծված կացությունը, Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր 1920 թ. դեկտեմբերի 2-ի նիստում որոշեց հրաժարվել իշխանությունից և հանձնել զինվորական ու քաղաքացիական բովանդակ իշխանությունը գորաբանակի ընդհանուր հրամանատարին, որպիսի պաշտոնում նշանակել ռազմական նախարար Դրոյին:

Նախարարների խորհրդի նախագահ՝ Ս. Վրացյան

Նախարարներ Ա. Հովհաննիսյան, Ա. Խոնդկարյան, Հ. Տերտերյան, Դ. Կանայան»[68]:

Հայաստանի Առաջին Հանրապետության վերջին վարչապետ Ս.Վրացյանը սույն հայտարարություն-ակտով ավարտում է 10-օրյա իր վարչապետության շրջանը և փակում ՀԱՀ պատմության վերջին էջը: Ի մի բերելով Ս. Վրացյանի վարչապետության շրջանի վերաբերյալ վավերագրերի,

---

[65] «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. ...», էջ 385–386, վավ. № 354:

[66] Նույն տեղում, էջ 387, վավ. № 356:

[67] Զ. Մսերլյան. Երեք Դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը). Բեյրութ, 1979, էջ 76:

[68] ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ. 248, թ. 4: Ս. Վրացյան. Ինչու և ինչպես..., էջ 95: Նույն՝ Հայաստանի Հանրապետություն, էջ 534, «Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ...», էջ 384, վավ. № 352:

տպագիր աղբյուրների նյութերն ու փաստերը, դալիս ենք հետևյալ եզրակացության.

1. Ս. Վրացյանը վարչապետի պաշտոնն ստանձնեց Հայաստանի Հանրապետության ներքին ու արտաքին ծանրագույն պայմաններում: Երկրի հյուսիսային դարպասը պաշարել էր բոլշևիկյան Ռուսաստանը, իսկ հարավում քեմալական զորքերը, գրավելով Կարսի մարզն ամբողջովին, հասել էին Ալեքսանդրապոլ և ծանր պահանջներով վերջնագրեր էին ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանը:

2. Ս. Վրացյանի կառավարության ընդունած օրենքները քաղաքական բնույթ ունեին և երկրի ներքին կյանքում գործնական որևէ նշանակություն չունեցան:

3. Արտաքին քաղաքականության ասպարեզում Վրացյանի գերխնդիրն էր կանգնեցնել թուրքական զորքերի առաջխաղացումը դեպի Երևան և լեզու գտնել Խորհրդային Ռուսաստանի հետ, դրանով իսկ փրկել մնացած տարածքն ու ժողովրդին վերջնական կործանումից:

4. Թեև Հայաստանի ճակատագիրը կանխորոշված էր քեմալական Թուրքիայի ու բոլշևիկյան Ռուսաստանի համաձայնեցված քաղաքականությամբ, այնուամենայնիվ, Վրացյանին հաջողվում է դեկտեմբերի 2-ին կնքված հայ-թուրքական հաշտության պայմանագրով ու հայ-ռուսական համաձայնագրով կանխել Հայաստանին ու հայ ժողովրդին սպառնացող մահացու վտանգը:

СИМОН ВРАЦЯН – ПРЕДСЕДАТЕЛЬ СОВЕТА МИНИСТРОВ ПЕРВОЙ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

АРШАК БАЛЬЯН

Резюме

В тяжелейшей экономической и политической обстановке Парламент Армении 23 ноября 1920 г. избрал председателем Совета Министров С. Врацяна, министра сельского хозяйства и госимущества в правительстве А. Оганджаняна. Статья посвящена десятидневной государственной деятельности С. Врацяна. С 23 ноября по 2 декабря 1920 г. на заседаниях правительства обсуждался и принимался ряд решений и законов, которые не смогли существенно повлиять на трагическую обстановку внутри страны, однако С. Врацяну удалось довести до логического конца затянувшиеся армяно-турецкие и армяно-российские переговоры. 2 декабря в Александраполе был подписан армяно-турецкий мирный договор и в тот же день в Ереване – соглашение между Арменией и РСФСР, до заключения которого Правительство С. Врацяна соответствующим актом передало власть в Армении представителю России Б. Леграну.